

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Միմոն Զավարյանի մահվան 100-ամյակի առթիվ
Երևան, 23 հոկտեմբերի, 2013 թ.*

Երևանում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում, 2013 թ. հոկտեմբերի 23-ին տեղի ունեցավ հայ մեծանուն քաղաքական գործիչ, ՀՅ Դաշնակցության հիմնադիրներից՝ Միմոն Զավարյանի մահվան 100-ամյակի առթիվ Հայ Յեղափոխական Դաշնակցության և ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի կազմակերպած համատեղ գիտական նստաշրջանը:

Նստաշրջանի լիազումար նիստը կայացավ ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում: Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը: Բանախոսն արժևորեց Միմոն Զավարյանի կյանքն ու գործունեությունը, Հայոց պատմության նոր շրջանում խաղացած նշանակալից դերը, ագրարային տնտեսագիտության ասպարեզում նրա գիտական ուսումնասիրությունների կարևորությունը:

Լիազումար նիստի հանդիսավոր մասում ողջույնի խոսքերով հանդես եկան ՀՅԴ Բյուրոյի անդամ, պատմ. գիտ. թեկնածու Լևոն Մկրտչյանը, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պատմ. գիտ. դոկտոր Էդիկ Մինասյանը և ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտի տնօրեն, բանաս. գիտ. դոկտոր Ավիկ Իսահակյանը:

Լևոն Մկրտչյանն իր խոսքում կարևորեց հատկապես Միմոն Զավարյանի քաղաքական լայնախոհությունը: Զավարյանը զանազան քաղաքական հոսանքների ներկայացուցիչների տեսակետների տարբերությունը համարում էր մարդկային մտքի զարգացման ընթացքին բնորոշ երևույթ: Նրա կարծիքով՝ հայության միջավայրում այլակարծությունը պետք է ընկալվի որպես ինքնահարստացման միջոց: Ըստ Լևոն Մկրտչյանի՝ Զավարյանի մոտեցումը արդիական է նաև մեր օրերում՝ հանդուրժողականության և համահայկական ընդգրկումի հասնելու ճանապարհին:

Աշոտ Մելքոնյանը իր ելույթում ընդգծեց, որ Զավարյանը արևմտահայերի ազատագրության գործին անմնացորդ նվիրված արևելահայ գործչի տիպար էր: Ուստի մեծ բարեբախտություն է, որ Խոջիվանքի գե-

*Ընդունվել է տպագրության 19.12.2013:

րեզմանատան ոչնչացումից հետո հնարավոր եղավ փրկել մեծ հայի աճ-
յունը և ապա տեղափոխել հայրենիք: Մեզանում հաճախ ազգային որևէ
գործչի մասին խոսելիս շեշտը դնում են նրա կուսակցական պատկանե-
լության վրա, մինչդեռ Ջավարյանի նման հերոսները համազգային դերա-
կատարություն են ունեցել, և կուսակցությունը նրանց համար ազգային
խնդիրների լուծման միջոց էր:

Էդիկ Մինասյանի կարծիքով՝ Միմոն Ջավարյանի կենսափորձի ու-
սումնասիրությունը խիստ կարևոր է մեր օրերում, որովհետև Ջավարյանը
մտածում և գործում էր համազգային ընդգրկմամբ, զուգորդում ազգայինն
ու համամարդկայինը, կարողանում մեկ քաղաքական կուսակցության
մեջ միավորել բոլոր հեղափոխականներին և խնդիր դնում մինչև վերջ
հասցնել ազատագրական պայքարը: Ըստ Է. Մինասյանի՝ Ջավարյանի
փորձը կենսական նշանակություն ունեցավ հատկապես Արցախյան մեր-
օրյա պայքարում, ուստիև քաղաքական գործիչների ներկա սերունդը
բազմաթիվ դասեր ունի քաղելու Ջավարյանի և 20-րդ դարասկզբի հայ
ազատամարտի մյուս ղեկավարների գործունեությունից:

Ավիկ Իսահակյանը ողջույնի հակիրճ խոսքից հետո մասնակիցներին
ներկայացրեց մոտ 100 տարի առաջ՝ 1913 թ. նոյեմբերին, Ավետիք Իսա-
հակյանի գրած «Միմոն Ջավարյանի հիշատակին» բանաստեղծությունը,
որը ցույց է տալիս մեծ բանաստեղծի կողմից անզուգական մարդու և
հեղափոխականի հանդեպ տածած խորը հարգանքը, քանզի, ելույթ ունե-
ցողի կարծիքով, Ջավարյանից բացի՝ Իսահակյանը այլևս ոչ մի գործչի
ձոն չի նվիրել:

Հանդիսավոր մասից հետո գիտական նստաշրջանի լիազումար նիս-
տում ընթերցվեցին երկու զեկուցումներ:

Պատմ. գիտ. դոկտոր, «ՎԷՄ» հանդեսի խմբագիր **Գևորգ Խուդինյանի**
զեկուցման թեման էր՝ «Միմոն Ջավարյանը և ազգի բարոյական վերա-
ծննդի հիմնախնդիրը»: Ջավարյանի ուրույն բարոյաբանության մասին
ժամանակակիցների և հաջորդ սերունդների տեսակետների ու գնահա-
տականների քննական վերլուծության միջոցով զեկուցողը հանգեց այն
հետևությանը, որ իստորիզմի (պատմականության) ամենախիստ գիտա-
կան չափորոշիչներն անգամ անգոր են Ջավարյանի անձն ու գործը կոնկ-
րետ-դարաշրջանային իրողությունների շրջագծում պարփակելու իրենց
փորձերում: Ուստի առաջնորդվելով Կարլ Ցասպերսի այն հիմնադադա-
փարով, համաձայն որի՝ մարդկային տեսակին բնորոշ բարոյական ըմբռ-
նումների հիմնարար արժեքափերը իրենց ընդհանուր գծերով նույնն են
մնացել «առանցքային ժամանակից» (Achsenzeit) մինչև մեր օրերը, զեկու-
ցողը բազմաթիվ փաստերի հիման վրա եզրակացրեց, որ Ջավարյանի
բարոյաբանությունը ենթակա չէ հնացման կամ արխաիկացման: Իր մեջ
ազգի էթնիկ հիշողությունը և էթնիկ գործելակերպի տիպական գծերը
խտացնելու միջոցով այն ձեռք է բերել **վերժամանակային** բնույթ:

Գ. Խուդինյանի կարծիքով՝ իր ուրույն բարոյաբանությունը կյանքում
կիրառելու զավարյանական մեթոդաբանությունը ՀՅԴ հիմնադիր ժողով-
ներից մինչև նրա մահը դրսևորվել է երկու հարթությունների վրա: **Առա-
ջին՝** հարազատ կուսակցության ներսում ազնիվ, խիզախ ու մարտնչող

հայի բարոյական տիպարի կերտում՝ հերոսականության գաղափարի արմատավորում, և **Երկրորդ**՝ ազգային-ազատագրական պայքարի ընդ-հանուր հունի մեջ ազգի բարոյական վերածննդի իր գաղափար-սկզբունքի կիրառում՝ հայության, որպես հավաքականության, մշակութային կերպարի վերականգնման համար: Այս երկու չափոյթների անխզելի միասնությունը Ս. Զավարյանին դարձրին ազգի բարոյական վերածննդի գաղափարի հիմնական կրողը 19-րդ դարավերջի – 20-րդ դարասկզբի հայ իրականության մեջ: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց այն բարոյական արժեքները, որոնք Զավարյանը կարողացավ ներդնել հարազատ կուսակցության մեջ՝ անհատականության գաղափարը, նվիրումի զավարյանական ըմբռնումը, ՀՅ Դաշնակցության՝ որպես ազգի բարոյաքաղաքական նորմերի ու պայքարի ոգու պահապան ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐԻ գաղափարը և այլն:

Լիազումար նիստում հանդես եկած երկրորդ զեկուցողի՝ Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսոր, «ԱՄԲԵՐԴ» հետազոտական կենտրոնի աշխատակից, տնտեսագիտության դոկտոր **Սամվել Ավետիսյանի** թեման էր «Սիմոն Զավարյանի դերը 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ ազգարային տնտեսագիտական մտքի զարգացման գործում»: Զեկուցողի կարծիքով՝ եթե Ս. Զավարյանի հեղափոխական գործունեությունը ուսումնասիրված է համեմատաբար մանրամասն կերպով, ապա որպես ազգարային տնտեսագետի՝ նրա գիտական և գործնական ծառայությունները մինչ օրս պատշաճ մակարդակով չեն գնահատվել: Մասնագիտությամբ Զավարյանը գյուղատնտես էր, Մոսկվայի Պետրոլյան գյուղատնտեսական ակադեմիան ավարտել էր գերազանց առաջադիմությամբ, իսկ հետագայում հեղինակել ազգարային տնտեսագիտությանը վերաբերող մի շարք արժեքավոր աշխատություններ, որոնք, սակայն, հիմնականում ռուսերենով տպագրվելու պատճառով գրեթե անծանոթ են հայ ընթերցողին: Ս. Ավետիսյանի կարծիքով՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո, բացի Իվան Շոպենից, ոչ ոք այնպիսի խորությամբ չէր ուսումնասիրել մեր երկրի տնտեսական ներուժը, մասնավորապես գյուղի և գյուղատնտեսության վիճակն ու հնարավորությունները, որքան Սիմոն Զավարյանը: Նրա «Փորձ Երևանի նահանգի և Կարսի մարզի հացաբեր շրջանների գյուղատնտեսության հետազոտության», «Կովկասը գյուղատնտեսական առումով 1899 թվականին», «Դարաբաղի տնտեսական պայմանները և 1906–1907 թթ. ՍՈՎԸ» և այլ աշխատությունների ու հոդվածների դրույթներից շատերը պահպանում են իրենց արդիականությունը նաև մեր օրերում: Ուստի Զավարյանը հեղափոխական էր նաև ազգարային տնտեսագիտության ոլորտում:

Գիտական նստաշրջանի **առաջին նիստը** տեղի ունեցավ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Պատմության ինստիտուտի «Մեսրոպ Աճյան» սրահում: Նիստը նախագահում էր ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Աշոտ Մելքոնյանը**:

ՀՅԴ Կենտրոնական արխիվի տնօրեն **Վաչե Բրուտյանն** իր «Սիմոն

ԼՐԱՏՈՒ

հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013
Ե (ԺԵ) քառի, թիվ 4 (44)

ՎԻՄ համահայկական հանդես

Զաւարեան և ՀՅԴ ապակեղորոնացումը» զեկուցման մեջ անդրադարձ կատարեց մի այնպիսի կարևոր խնդրի, ինչպիսին ՀՅ Դաշնակցության կենսունակության հիմքը դարձած կազմակերպական կառույցի ապակենտրոնացումն է: Այդ սկզբունքի որդեգրման գործում էական դեր է խաղացել Սիմոն Զավարյանը՝ տեսականորեն հիմնավորելով աշխարհագրական տարբեր միջավայրերում գործող քաղաքական կազմակերպության գաղափարական կենտրոնացման ու կազմակերպական ապակենտրոնացման սկզբունքները:

Բանաս. գիտ. թեկնածու **Ալա Խառատյանը** (Մատենադարան) մանրամասն անդրադարձ կատարեց արևմտահայ գրականության մեջ Սիմոն Զավարյանի կերպարի արծարծմանը: Հեղինակը շեշտեց այն իրողությունը, որ պատմության այս կամ այն շրջափուլում հայ գրականության մեջ միշտ էլ առաջ էր մղվում մի կերպար, որի գործունեությունը վճռորոշ ազդեցություն էր ունենում պատմամշակութային կյանքում և հարաբերություններում: Զավարյանի կերպարի արծարծումն արևմտահայ գրականության մեջ ցույց է տալիս, որ նա այդպիսի վառ անհատականություններից մեկն էր:

ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտի աշխատակից, բանաս. գիտ. դոկտոր **Սուսաննա Հովհաննիսյանը** խոսեց Հովհաննես Թումանյան-Սիմոն Զավարյան գաղափարական ու մարդկային հարազատության մասին: Նրանց միջև նամակագրությունը փաստում է, որ երկու Մեծ լոռեցիները եղել են լավ բարեկամներ: Հովհ. Թումանյանը Զավարյանին համարել է ազգային ճշմարիտ գործիչ ու մարդկային տիպար:

Նստաշրջանի երկրորդ նիստում, որը նախագահում էր պատմ. գիտ. դոկտոր **Գևորգ Խուրդինյանը**, զեկուցումով հանդես եկավ Վանաձորի մանկավարժական համալսարանի դասախոս, պատմ. գիտ. թեկնածու **Մկրտիչ Դանիելյանը**: Նա մանրամասն ներկայացրեց Սիմոն Զավարյանի գործունեության նարողնիկական շրջանը, երբ տեղի էր ունենում ազգային գործչի գաղափարական հասունացումը: Զավարյանը և նարողնիկության բովով անցած դաշնակցական շատ գործիչներ իրենց հետ կուսակցություն բերեցին նարողնիկությանը բնորոշ գաղափարներ և գործունեության մեթոդներ:

Պատմաբան **Արթուր Ղազարյանը** (Երևանի Խ. Աբովյանի անվ. մանկավարժական համալսարան) իր զեկուցման մեջ ներկայացրեց սոցիալական արդարության մասին Զավարյանի տեսակետները: Արդարությունը Զավարյանի մոտ վառ արտահայտված բարոյաբանական բնույթ ուներ: Արդար հասարակարգի կենտրոնում մարդու ազատությունն է, զարգացման և ինքնազարգացման ճանապարհների անկաշկանդ ընտրությունը: Ընկերային անարդարությունն է պատճառը, որ հազարավոր հայեր հեռանում են իրենց հայրենիքից, ուստի ընկերվարության մասին Զավարյանի հարցադրումները պահպանում են իրենց արդիականությունը նաև մեր օրերում:

Բանաս. գիտ. դոկտոր **Թերեզա Շահվերդյանը** (Վանաձորի մանկավարժական համալսարան), ով սերում է Զավարյանի մոր տոհմից, խոսեց 1909-1911 թթ. Տարոնում Սիմոն Զավարյանի ծավալած մանկավարժական

գործունեության մասին: Զեկուցողը արժևորեց Զավարյանի ներդրումը կրթական գործում, նրա մանկավարժական հայացքները: Զավարյանի մանկավարժական ժառանգությունն, ըստ Թ. Շահվերդյանի, պարունակում է հայ կրթական գործի կազմակերպման համար արժեքավոր տեսական և մեթոդական ցուցումներ:

Պատմ. գիտ. թեկնածու, ՀՀ Պաշտպանության նախարարության «Մայր Հայաստան» թանգարանի տնօրեն **Ավագ Հարությունյանն** իր գեկուցման մեջ նորահայտ արխիվային վավերագրերի հիման վրա ներկայացրեց մեծանուն հայորդու մահվան կապակցությամբ ի սփյուռս աշխարհի տեղի ունեցած հրաժեշտի միջոցառումները, որպիսիք իրենց համահայկական ընդգրկմամբ մեզանում այլևս չեն եղել: Զավարյանի անժամանակ մահը հայոց նոր շրջանի պատմության ամենացավալի անակնկալներից մեկն էր, ուստի այդ ողբերգությանն արձագանքեցին և իրենց ցավակցությունը հայտնեցին ժամանակի հայ հասարակության բոլոր շերտերը և քաղաքական գունապնակի բոլոր երանգները ներկայացնող գործիչները, անգամ հայ բոլշևիկները: Անժամանակ մահ և անսիրտարհիների կորուստ հայ իրականության համար. այս դառը մտորումներն էին գերիշխում Զավարյանի մահվան առիթով աշխարհի տարբեր ծայրերից ստացված հեռագրերում:

Գիտական նստաշրջանի վերջում տեղի ունեցած քննարկմանը մասնակցեցին պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ Ազգային արխիվի տնօրեն **Ամատունի Վիրաբյանը**, «Սիմոն Զավարյան» հասարակական կազմակերպության ղեկավար, բժիշկ **Գագիկ Շահվերդյանը**, ամերիկահայ ծանաչված պատմաբան ու բանասեր **Ռուբինա Փիրումյանը**, ՀՅԴ Կենտրոնական արխիվի տնօրեն **Վաչե Բրուտյանը**, «ՎԷՄ» հանդեսի խմբագիր **Գևորգ Խուդինյանը** և ուրիշներ:

U. C.

SCIENTIFIC SESSION

on the occasion of the 100th anniversary of Simon Zavaryan's death
Yerevan, October 23, 2013

A. E.

ՉԷԻՄ համահայկական հանդես
Ե (ԺԱ) ցարի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013
ԼՐԱՏՈՒՐ